ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

0064, Երևան, Ա. Բաբաջանյան 25
Հեռ. 74 11 12, 73 23 30
info@mskh.am, www.mskh.am

N 12-08-250
«08» 08. 2012թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի քաղաքապետ.

Ձեր հանձնարարությամբ ներկայացնում ենք 2012թ. ապրիլի 10-ին՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր Ձեր այցի ժամանակ, մեր կողմից ներկայացված հարցերի լուծման առաջարկները:

1. Հարավարևմտյան զանգվածի Բ-1 թաղամասում գործող «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արհեստագործական ավագ դպրոցը, Նոր դպրոցը, Գեղարվեստի ավագ և կրտսեր դպրոցները, Մայր դպրոցները կապող միջթաղամասային անցումները բարեկարգման անհետաձգելի աշխատանքները կատարել մինչև 2012թ. սեպտեմբերը: Այդ անցումներից օգտվում են Բ-1 թաղամասի բոլոր բնակիչները: Մենք պատրաստ ենք առավելագույն չափով մասնակցելու բարեկարգման աշխատանքներին:
2. Մայրաքաղաքի 2013թ. բարեկարգման ծրագրերում նախատեսել մեր ներկայացրած «Կրթական պարտեզ» ուսումնական նախագծի աշխատանքները:
3. Կրթահամալիրի նախակրթարանների (մանկապարտեզների)՝ երևանցի 2-5 տարեկան սաների սննդի և խնամքի ծախսերը քաղաքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների չափաքանակով կատարել քաղաքային բյուջեի հաշվին:
4. Մայրաքաղաքի 2013թ. ծրագրերում նախատեսել «Սեբաստիա» համայնքային մարզահամալիրի կառուցումն ավարտելու աշխատանքները:
5. Աջակցել կրթահամալիրի «Սոցիալական բնակարան կրթահամալիրի կարիքավոր ուսուցչին» ծրագրին՝ Հարավարևմտյան զանգվածում հատկացնելով հողատարածք 80 բնակարանով երկու շենք կառուցելու համար:
6. Մայրաքաղաքի հիմնական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների համար հաստատել պետական աջակցության 2012թ. Ա-6/18-12 պայմանագրով նախատեսված՝ կրթահամալիրում ԿԳ նախարարության պատվերով իրականացվող հեղինակային կրթական ծրագրերի ներդրման (տեղայնացման) 2012-2013 ուստարվա ծրագիրը:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ԲԼԵՅԱՆ**